

ՍՈՒՐԻՈՅ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐՈՒ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՅՅԸ ՎԵՐ. ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻՆ

Շաբաթ 22 Փետրուար, 2014-ին, Սուրիոյ Ընկերային Հարցերու Նախարար՝ Դոկտ. Քինտա Ալ-Շամմաթ ընկերակցութեամբ՝ Հալէպի Նահանգապետ՝ Տիար Մուհամմէտ Ուահիտ Աքքատի եւ Սուրիոյ Պետական աւագանիին կատարեցին պաշտօնական այցելութիւն Վերապատուելի Համայնքապետին, իր գրասենեակէն ներս: Հանդիպումի ընթացքին քննարկուեցան երկու հիմնական հարցեր 1) Ու՞ր պատասպարել տեղահանուած ընտանիքները Սուրիոյ մէջ 2) Ինչպէ՞ս օգնութիւն հայթայթել անոնց իրենց անմիջական կարիքներուն:

